ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան
Կոտայքի տարածաշրջանային
պետական քոլեջի կառավարման
խորհրդի նախագահ
04 մարտի 2026 թվական

ԿԱՆՈՆՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂԻ ՎԱՐՔԻ

ՀՐԱԶԴԱՆ 2026

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնները սահմանում են քոլեջի ուսանողների վարքագծի, իրավունքների և պարտականությունների հիմնական նորմերը:

1.2. Կանոնները պարտադիր են քոլեջի բոլոր ուսանողների համար՝ անկախ ուսման ձևից, կուրսից և մասնագիտությունից:

1.3. Սույն կանոնների համար հիմք են հանդիսանում քոլեջի կանոնադրությունը, ուսանողի հետ կնքած պայմանագիրը և լիազոր մարմնի կողմից տրված հրամանները, որոշումները:

1.4. Սույն կանոնները մշակվել են լրացնելու Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում ուսումնառողների իրավունքներն ու պարտականությունները, խրախուսման և տույժի կիրառման մեխանիզմները:

1.5. Վարքի կանոնների նպատակը քոլեջում առողջ, անվտանգ և արդյունավետ կրթական միջավայրի ապահովումն է:

1.6. Սույն կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարվում են նույն կարգով:

2. Ուսանողի իրավունքները

Ուսանողն իրավունք ունի՝

2.1. ստանալ որակյալ կրթություն և օգտվել քոլեջի ուսումնական ռեսուրսներից,
2.2. արտահայտել սեփական կարծիքը՝ չխախտելով այլոց իրավունքները,
2.3. մասնակցել քոլեջի հասարակական, մշակութային և մարզական միջոցառումներին,
2.4. ստանալ աջակցություն կուրսղեկից, հոգեբանից կամ վարչակազմից,
2.5. պաշտպանել իր արժանապատվությունն ու անձնական տվյալների գաղտնիությունը:

3. Ուսանողի պարտականությունները

Ուսանողը պարտավոր է՝

3.1. ենթարկվել քոլեջի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և սույն վարքի կանոններին,

3.2. Ժամանակին և կանոնավոր մասնակցել դասերին,

3.3. կատարել ուսումնական առաջադրանքները,

3.4. հարգել դասախոսների, աշխատակիցների և ուսանողների իրավունքները,

3.5. պահպանել ակադեմիական ազնվությունը,

3.6. հոգատար վերաբերվել քոլեջի գույքին և սարքավորումներին:

4. Վարքագիծը ուսումնական գործընթացում

4.1. Ուսանողը պարտավոր է դասերին ներկայանալ պատշաճ պարզ հագուստով, հարդարված և կոկիկ:

4.2. ՈՒսանողը պետք է՝

- չուշանա դասերից
- հարգելի ուշացման դեպքում տեղեկացնի կուրսի ավագին կամ կուրսղեկին
- հեռավոր բնակավայրերից 1-ին ժամից պատճառաբանված հարգելի ուշացման համար ներկայացնի դիմում կուրսղեկին
- դասապրոցեսի ընթացքում առողջական խնդիրներ առաջանալու դեպքում դիմի քոլեջի բուժկետ(այս դեպքում դասերից ազատվում են բուժքրոջ հրահանգով, բացթողման թերթիկով)
- անհարկի չբացակայի դասերից
- առողջական խնդիրների վիճակով պայմանավորված բացակայության մասին տեղեկացնի (հեռախոսով) կուրսղեկին և ներկայացնի բժշկական տեղեկանք
- չգերազանցի անհարգելի բացակայությունների՝ քոլեջում թույլատրելի ժամաքանակի շեմը (հակառակ դեպքում կենթարկվի կարգապահական տույժի ըստ գործող կարգի),
- մինչև 3 օր հարգելի բացակայության մասին տեղեկացնի կուրսղեկին, ստանա բացթողնման թերթիկ
- 4-ից 5 օր հարգելի բացակայության մասին ծնողի կողմից դիմում ներկայցնի քոլեջի տնօրենին

4.3. Դասի ընթացքում ուսանողը պետք է՝

- չխանգարի դասի ընթացքը
- հետևի դասախոսի ցուցումներին
- լսի դասախոսի կարգապահական հրահանգները
- հարցերն ու մեկնաբանությունները ներկայացնի հարգալից ձևով
- հեռախոսը օգտագործի դասախոսի թույլտվությամբ՝ միայն որպես ուսումնական գործընթացին աջակցող տեղեկատվական գործիք
- չաղմկի դասի ժամանակ
- լսարանում չստեղծի իրարանցում

4.4. Արգելվում է՝

- **առանց թույլտվության օգտագործել հեռախոս, ականջակալներ կամ այլ սարքեր,**
- **արտագրել, կեղծել կամ օգտագործել չարտոնված աղբյուրներ,**
- **ուշանալ կամ ինքնակամ լքել դասը:**

5. Վարքը քոլեջի տարածքում

5.1. Ուսանողը պարտավոր է պահպանել կարգուկանոն քոլեջի ողջ տարածքում՝ լսարաններում, միջանցքներում, գրադարանում, լաբորատորիաներում, բակում:

- դասաժամերի ընթացքում անհարկի դուրս չգա լսարանից
- դասաժամերի ընթացքում դասախոսի թույլտվությամբ դուրս գա միայն հատուկ կարիքի կամ առողջական պատճառով
- դասաժամերի ընթացքում չշրջի քոլեջի միջանցքներում, սանհանգույցներում, չբացի այլ լսարանների դռներ, չկանգնի քոլեջի շքամուտքի մոտ կամ հարակից տարածքում
- չաղմկի քոլեջի միջանցքներում և հարակից տարածքում

5.2. Արգելվում է՝

- **ծխելը (ներառյալ էլեկտրոնային ծխախոտ)**

- ***ալկոհոլային և էներգետիկ խմիչքների , թմրամիջոցների օգտագործումը կամ տարածումը***
- ***քոլեջ՝ այլոց առողջության և կյանքի համար սպառնալիք հանդիսացող իրեր և գործիքներ բերելը***
- ***քոլեջի գույքի և ներքին հարդարանքի վնասումը կամ ապօրինի օգտագործումը:***

6. Էթիկա, հաղորդակցություն և առցանց վարք

6.1. Ուսանողը պարտավոր է պահպանել քաղաքավարի, հարգալից և հանդուրժողական վարք:

- *պահպանել միջանձնային փոխհարաբերությունների համընդհանուր կանոնները*
- *չցուցաբերել վարքի և խոսքի անհարգալից դրսևորումներ դասախոսի և քոլեջի աշխատակիցների նկատմամբ, պահպանել վարվեցողության , քաղաքավարության, բարեկրթության կանոնները և հավասարապես հարգանք ցուցաբերել քոլեջի բոլոր դասախոսների և աշխատակիցների նկատմամբ*
- *հարգանքով և բարեկրթորեն վերաբերվել համակուրսեցիներին և քոլեջի բոլոր ուսանողներին*
- *հարգել կրթության հատուկ կարիքներ ունեցողների իրավունքները*

6.2. Արգելվում է՝

- ***վիրավորական, նվաստացուցիչ կամ սպառնալի խոսքը***
- ***ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը (բուլինգ)***
- ***խտրական վարքը՝ ազգային, սեռական, կրոնական կամ այլ հատկանիշներով:***

6.3. Սոցիալական ցանցերում ուսանողը պարտավոր է չվնասել քոլեջի հեղինակությունը և չտարածել կեղծ կամ վիրավորական տեղեկատվություն:

6.4 Արգելվում է՝

- *առանց համաձայնության գաղտնի տեսագրել և ձայնագրել քոլեջի աշխատակիցներին, ուսանողներին և տարածել սոցիալական ցանցերում*

7. Անվտանգություն և առողջություն

7.1. Ուսանողը պարտավոր է պահպանել անվտանգության և հակահրդեհային անվտանգության կանոնները .քոլեջ չբերել պայթուցիկ և դյուրավառ իրեր:

7.2. Արտակարգ իրավիճակների դեպքում ուսանողը պետք է ենթարկվի պատասխանատու անձանց ցուցումներին:

7.3. Խրախուսվում է առողջ ապրելակերպը և հոգեկան առողջության պահպանումը.

- *հետևել լսարանի, քոլեջի սանիտարական վիճակին, կատարել հերթապահություն, մասնակցել շաբաթօրյակներին*
- *ակտիվորեն մասնակցել ներքոլեջային, արտալսարանային միջոցառումներին, աջակցել դրանց կազմակերպմանը*

8. Կարգապահական պատասխանատվություն

8.1. Սույն կանոնների խախտման դեպքում կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

- *բանավոր զգուշացում,*
- *գրավոր նկատողություն,*
- *գրավոր խիստ նկատողություն,*
- *ծնողի կամ օրինական ներկայացուցչին իրազեկում,*
- *հեռացում քոլեջից՝ օրենքով սահմանված կարգով:*

8.2. Կարգապահական տույժերը կիրառվում են խախտման ծանրությանը համապատասխան:

9. Խրախուսում

9.1. Կանոնները պահպանող և օրինակելի վարք ցուցաբերող ուսանողները կարող են խրախուսվել՝

- *շնորհակալագրերով,*
- *պատվոգրերով,*
- *քոլեջի միջոցառումներին ակտիվ ներգրավմամբ:*

10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն վարքի կանոնները ուժի մեջ են մտնում քոլեջի կառավարման խորհրդի կողմից հաստատման պահից:

10.2. Կանոններում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել սահմանված կարգով:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն՝ Ք. Հակոբյան